ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս. թ. հուլիսի 20-ին պաշտոնական այցով Մայր Աթոռ ժամանեց Ամերիկայի Միացյալ Նահանգների եպիսկոպոսական եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ եպիսկոպոսաց խորհրդի նախագահ Ջոն Մ. Ալլին եպիսկոպոսի:

Պատվիրակության կազմում էին հայր Վիլյամ Նորգրենը՝ էկումենիկ հարաբերությունների քարտուղար, կանոնիկոս Ռիչարդ Անդերսոնը՝ մամուլի ներկայացուցիչ, դոկտ. Պիտըր Դեյը՝ էկումենիկ հարաբերությունների խորհրդական, և դոկտ. Պոլ Անդերսոնը՝ խորհրդական արևելյան եկեղեցիների գծով:

Առաջին անգամ է, որ ԱՄՆ-ի եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդը, ի գլուխ պատգամավորության, այցելում էր Մայր Աթոռ ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Հուլիսի 21-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, պատգամավորությունը ժամանեց Մայր Աթոռ և, Մայր տաճարում իր աղոթքն անելուց հետո, Վեհարանում ընդունվեց Հայոց Հայրապետի կողմից: Այստեղ փոխանակվեցին ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքեր:

Այնուհետև ժամը 10.30-ից մինչև 13.30-ը Վեհարանում տեղի ունեցավ հանդիպում-խորհրդակցություն եպիսկոպոսական եկեղեցու պատվիրակության և Մայր Աթոռի ներկայացուցիչների միջև:

Մայր Աթոռի կողմից սույն խորհրդակցությանը մասնակցում էին Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, տ. Ավագ աբեղա Ասատուրյանը, տ. Սարգիս քհն. Սարգսյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պրն. Հովհաննես Թոփուզյանը և հայ եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար պրն. Պարգև Շահբազյանը:

Խորհրդակցության օրակարգում դրված էին հետևյալ հարցերը.

ա. Որոնում այն ճանապարհների, որոնք եկեղեցիները կառաջնորդեն դեպի միություն:

բ. Կրոնական ազատություն և հավատացյալների իրավունքները:

գ. Կանանց ձեռնադրություն. 1976 թվականի սեպտեմբերին եպիսկո-

պոսական եկեղեցու ընդհանուր համագումարում ընդունված որոշումը կանանց քահանայական ձեռնադրությունը արտոնելու մասին:

Խորհրդակցության ընթացքում օրակարգի վրա դրված վերոհիշյալ հարցերի շուրջ տեղի ունեցավ մտքերի անկաշկանդ փոխանակում, որի շնորհիվ կողմերը ծանոթացան միմյանց տեսակետներին:

Խորհրդակցությունից հետո եպիսկոպոսական եկեղեցու պատվիրակությունը այցելեց Նոր Վեհարանի դահլիճ ու պատկերասրահ, ծանոթացավ Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարանին, Հին Վեհարանին և Մայր Աթոռի շրջափակում գտնվող հուշարձաններին:

Ժամը 14.30-ին Մայր Աթոռի միաբանական սեղանատանը տրվեց ճաշկերույթ՝ ի պատիվ հյուրերի:

Ժամը 16-ին պատգամավորությունը Երևանում այցելեց ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան և ապա Ծիծեռնակաբերդում՝ Հայ նահատակաց հուշարձան, ուր «հոգվոց» արտասանվեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Հուլիսի 22-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 9-ին, պատգամավորությունը այցելեց Գառնիի վերականգնված հեթանոսական տաճար և ապա՝ ս. Գեղարդ վանք, ուր ջերմորեն ընդունվեց վանահայր տ. Վահան եպիսկոպոս Տերյանի կողմից, որը հյուրերին տվեց պատմական անհրաժեշտ բացատրություններ մենաստանի մասին:

Ժամը 14-ին հյուր պատվիրակությունը Վեհարանում վերջին տեսակցությունը ունեցավ Հայոց Հայրապետի հետ: Այս առթիվ փոխանակվեցին հուշանվերներ:

Ժամը 14.30-ին Հայոց Հայրապետի նախագահությամբ Վեհարանի սեղանատանը, ի պատիվ հյուրերի, տրվեց ողջերթի ճաշկերույթ, որին ներկա եղան նաև տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Արսեն սրբազանները, տ. Ավագ աբեղա Ասատուրյանը և տ. Սարգիս քահանա Սարգսյանը:

Ընդունելության ժամանակ ողջերթի և շնորհակալության ճառեր փոխանակեցին Վեհափառ Հայրապետը և եպիսկոպոսական եկեղեցու պետ տ. Ջոն Մ. Ալլին եպիսկոպոսը:

Այնուհետև պատվիրակությունը հրաժեշտ տվեց Ամենայն Հայոց Հայրապետին և մեկնեց Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:

Նույն օրը, երեկոյան, հյուրերը ճանապարհվեցին Մոսկվա:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
23 հուլիսի 1977 թ.